

## «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2011թ.

Հաշվապահական հաշվառումը «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ում վարվել է ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 116-Ն Որոշումով հաստատված Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին, Ներդրումային ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

Ընկերության 2011թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն «Հաշվապահական Հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների և գերատեսչական նորմատիվ իրավական այլ ակտերի:

Ընկերության ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, հաշվեկշռային հաշիվներում հաշվառելու նպատակով, Ընկերության ղեկավարությունն ընտրում և կիրառում է այնպիսի հաշվապահական հաշվառման քաղաքականություն, որ ֆինանսական հաշվետվությունների փաթեթը և նրանցում պարունակվող տեղեկատվությունը պարտադիր բավարարեն կիրառվող յուրաքանչյուր ստանդարտի բոլոր պահանջներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բավարարում է հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների կազմման հետևյալ սկզբունքներին.

- *անընդհատության սկզբունք*` Ընկերությունը շարունակելու է իր գործունեությունը տեսանելի ապագայում և միտում չունի լուծարվելու կամ կրճատելու իր գործունեության ծավալները:
- *արժանահավատության սկզբունք*` ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվությունը պետք է ճշմարիտ ներկայացնի Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև արտացոլի`
  - ա) ոչ միայն իրավական կողմը, այլ նաև դեպքերի և գործառնությունների տնտեսական բովանդակությունը,
  - բ) լինի չեզոք, գերծ մնա կանխակալությունից,
  - գ) լինի հաշվեցնկատ,
  - դ) լինի ամբողջական բոլոր էական դրսևորումներում:

- *հաշվեգրման սկզբունք*՝ տնտեսական գործառնությունների և դեպքերի արդյունքները ճանաչվում և հաշվապահական հաշվառման մեջ գրանցվում են այն ժամանանակ, երբ դրանք տեղի են ունեցել, անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից, և արտացոլվում են այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են,
- *հասկանալիության սկզբունք*՝ ֆինանսական հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի օգտագործողներին,
- *էականության և միասնականության սկզբունք*՝ ֆինանսական հաշվետվություններում յուրաքանչյուր էական հոդված պետք է ներակայացվի առանձին, իսկ ոչ էական հոդվածները՝ միավորված,
- *համադրելիության սկզբունք*՝ տարբեր ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները պետք է համադրելի լինեն:

«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ի կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունները բավարարում են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ Օրենքի պահանջներին, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվությունը պարունակում է բավարար չափով ինֆորմացիա:

2018-ի ընթացքում հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ենթարկվել է փոփոխության:

Սույնով հայտարարում ենք նաև, որ պատասխանատվություն ենք կրում.

- 1) Ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝
  - ա) հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, իրավասու մարմնի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
  - բ) հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,
  - գ) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
  - դ) հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար.

- ե) ֆինանսական հաշվետվությունները ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,
- 2) Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, ՀՀ օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,
- 3) Ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ մեր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Գործադիր տնօրեն՝

Վաղինակ Սարոյան

Գլխ.հաշվապահ՝

Նաիրա Մարգարյան